

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

*2019/2020 ուսումնական տարի*

**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ**

**Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր**

1. Աշխատանքային իրավունքի առարկան, մեթոդը, ֆունկցիաներն ու խնդիրները:
2. Աշխատանքային իրավունքի համակարգը: Աշխատանքային իրավունքի փոխհարաբերությունը իրավունքի մյուս ճյուղերի հետ (կապը և տարբերությունները):
3. «Աշխատանքային իրավունքի աղբյուրներ» հասկացությունը և դասակարգումը:
4. Աշխատանքային իրավունքի սկզբունքների ընդհանուր բնութագիրը (հասկացությունը և դասակարգումը): Ընդհանուր իրավական սկզբունքներն աշխատանքային իրավունքի ոլորտում:
5. Աշխատանքային իրավահարաբերություններ հասկացությունը, դասակարգումը և առանձնահատկությունները: Աշխատանքային իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումն ու դադարումը (իրավաբանական փաստեր):
6. «Աշխատանքային իրավունքի սուբյեկտներ» հասկացությունը և դասակարգումը: Աշխատողը որպես իրավունքի սուբյեկտ (իրավունակությունը, գործունակությունը, հիմնական իրավունքներն ու պարտականությունները): Գործատուն որպես իրավունքի սուբյեկտ (իրավասուբյեկտությունը, հիմնական իրավունքներն ու պարտականությունները):
7. Գործատու իրավասու անձի աշխատանքային-իրավական կարգավիճակը: Աշխատողների և գործատուների ներկայացուցչական մարմինները որպես իրավունքի սուբյեկտ: Աշխատանքային իրավունքի այլ սուբյեկտները:
8. «Ժամկետներ» հասկացությունը և տեսակները: Ժամկետները հաշվարկելու կարգը: Հայցային վաղեմության և մարման ժամկետներ:
9. Աշխատանքային իրավական նորմերի կիրառումն անալոգիայով: Օրենքի և իրավունքի անալոգիան:

10. Աշխատանքային իրավունքների և պարտականությունների իրականացման (կատարման) ընդհանուր պայմանները: Աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակները:
11. «Սոցիալական գործընկերություն» հասկացությունը և սկզբունքները: Սոցիալական գործընկերության կողմերը, ձևերը և համակարգը:
12. Կոլեկտիվ պայմանագիր. կոլեկտիվ պայմանագրի հասկացությունը, բովանդակությունը և տեսակները (մակարդակները): կոլեկտիվ պայմանագրի մշակումը, կնքումը, փոփոխումը և դադարումը:
13. Կոլեկտիվ աշխատանքային վեճի հասկացությունը և տեսակները: Կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկման կարգը: Հաշտեցման հանձնաժողով:
14. Գործադուլի իրավունք. իրականացման հիմքերը, կարգն ու պայմանները: Անօրինական գործադուլի իրավական հետևանքները:
15. Աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը: Աշխատող վարձելու ընդհանուր և հատուկ պահանջները:
16. Օտարերկրացիների յետ աշխատանքային պայմանագրի կնքման գործընթացը և աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը:
17. Իրավական ակտերի բնույթը: Դրաց կիրառման դեպքերը:
18. Իրավական ակտերն ուժի մեջ մտնելը: Իրավական ակտի գործողության դադարեցումը:
19. Աշխատանքի ընդունման մասին գործատուի կողմից ընդունված անհատական իրավական ակտի բովանդակությունը:
20. Աշխատանքային պայմանագիր. աշխատանքային պայմանագրի կնքումը փորձաշրջան անցնելու պայմանով:
21. Աշխատանքային պայմանագրի կնքումն ընտրություններում և մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ: Աշխատանքային պայմանագրի անվավերությունը և դրա իրավական հետևանքները:
22. Պայմանագրերի ընդհանուր բնութագրերը, տեսակները և դրանց առանձնահատկությունները:

23. Աշխատանքային պայմանագրի տեսակները:
24. Աշխատանքային պայմանագրի էական պայմանների փոփոխումը, աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքների ներգրավելը:
25. «Աշխատանքային ստաժ» հասկացությունը, տեսակները և հաշվարկման կարգը:
26. Աշխատողի վերապատրաստումը, որակավորման բարձրացումը և ատեստավորումը:
27. Աշխատանքային իրավահարաբերությունների դադարման ընդհանուր բնութագիրը:
28. Աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը:
29. Երաշխիքները աշխատանքային պայմանագիրը լուծելիս:
30. Զանգվածային ազատումների հիմքերն ու կարգը:
31. Աշխատանքային պայմանագրի լուծման ձևակերպումը, արձակման նպաստ վճարելը և վերջնահաշվարկ կատարելը:
32. Գործատուի պարտականություններն աշխատողի անձնական տվյալների պաշտպանության ոլորտում: Աշխատողի իրավունքներն իր անձնական տվյալների պաշտպանության ոլորտում:
33. Աշխատաժամանակի տեսակները. նորմալ, կրճատ և ոչ լրիվ աշխատաժամանակ:
34. Աշխատաժամանակի ռեժիմը, աշխատաժամանակի գումարային հաշվարկը:
35. Հերթապահություն: Հիմնական առանձնահատկությունները և իրավական կարգավորումը:
36. Հերթափոխային աշխատանք: Հիմնական առանձնահատկությունները և իրավական կարգավորումը:
37. Գիշերային աշխատանք: Հիմնական առանձնահատկությունները և իրավակիրառական պրակտիկան:
38. Արտաժամյա աշխատանքի իրավական կարգավորումը:
39. Գործուղում: Արտադրական և ուսումնական գործուղումներ:

40. Պարապուրդ: Ընդհանուր բնութագիրը և առանձնահատկությունները:
41. «Հանգստի ժամանակ» հասկացությունը և տեսակները: Հանգստյան օրեր, աշխատանքը հանգստյան օրերին:
42. Հանգիստն աշխատանքային օրվա ընթացքում:
43. Հանգիստն աշխատանքային օրերի միջև:
44. Հանգիստն աշխատանքային շաբաթվա ընթացքում:
45. Չօգտագործված ամենամյա արձակուրդի տրամադրումը աշխատանքից ազատվելիս:
46. Ամենամյա արձակուրդի վճարումը
47. Ամենամյա արձակուրդ. ամենամյա լրացուցիչ և երկարացված արձակուրդներ:
48. Հղիության և ծննդաբերության, երեխայի խնամքի, ուսումնական, պետական կամ հասարակական պարտականություններ կատարելու և չվճարվող արձակուրդներ). տրամադրման կարգը և պայմանները:
49. Պետական կամ հասարակական պարտականություններ կատարելու համար տրվող արձակուրդների ընդհանուր բնութագիրը, իրավակիրառական պրակտիկան:
50. Չվճարվող արձակուրդներ. տրամադրման կարգը և պայմանները:
51. Ուսումնական արձակուրդների տրամադրման կարգը և պայմանները:
52. «Աշխատավարձ» հասկացությունը և կարգավորման մեթոդները:
53. Նվազագույն ամսական աշխատավարձ: Նվազագույն ամսական աշխատավարձի յիմնական առանձնահատկությունները:
54. Աշխատավարձի վճարման ձևը (վճարման միջոցը) և որոշման չափանիշները:
55. Աշխատավարձի համակարգերը: Աշխատավարձի վճարման պայմանները փոփոխելը:
56. Համատեղությամբ, հանգստյան օրերին, արտաժամյա, տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքի վարձատրությունը:

57. Աշխատանքի վարձատրությունը ոչ լրիվ, կրճատ աշխատաժամանակի, աշխատանքների ծավալի մեծացման, աշխատանքի նորմերը չկատարելու, խոտանի և պարապուրդի դեպքում:
58. Միջին աշխատավարձ: Աշխատավարձի իրավական պաշտպանությունը:
59. «Երաշխիքներ և փոխհատուցումներ» հասկացությունը և տեսակները:
60. «Աշխատանքային կարգապահություն» հասկացությունը և ամրապնդման միջոցները:
61. Ներքին կարգապահական կանոններ:
62. Աշխատողներին խրախուսելու հիմքերն ու միջոցները:
63. Աշխատողների կարգապահական պատասխանատվության հիմքերը (կարգապահական զանցանքներ). հասկացությունը և տեսակները:
64. Կարգապահական տույժի միջոցները, կիրառման կարգը և բողոքարկումը: Կարգապահական տույժերի գործողության ժամկետը: Տույժը վերացնելը:
65. Կարգապահական տույժերի տեսակները, կարգապահական տույժի ընտրությունը և կարգապահական տույժի կիրառման կարգը:
66. Աշխատանքային պայմանագրի կողմերի նյութական պատասխանատվության ընդհանուր բնութագիրը:
67. Աշխատողի պատճառած վնասի հատուցումը, վնասի չափը որոշելը:
68. Աշխատողի լրիվ նյութական պատասխանատվությունը:
69. Գործատուի կողմից աշխատողի գույքին պատճառած վնասի հատուցումը:
70. Աշխատողի կյանքին պատճառած վնասը հատուցելը: Աշխատողի առողջությանը պատճառած վնասը հատուցելը:
71. Վնասի հատուցումը գործատուի վերակազմակերպման և լուծարման դեպքում:
72. «Աշխատանքի պաշտպանություն՝ հասկացությունը, աշխատանքի պաշտպանության կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումները: Աշխատանքը ժամանակավորապես դադարեցնելը:

73. Անչափահասների և հաշմանդամների աշխատանքի պաշտպանության առանձնահատկությունները:
74. Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց աշխատանքի պաշտպանության առանձնահատկությունները:
75. Ժամանակավոր անաշխատունակություն: Ժամանակավոր անաշխատունակության նպաստների տեսակները, չափերը և նշանակման հիմքերը:
76. Մայրության նպաստի չափերը և նշանակման հիմքերը:
77. Աշխատանքային վեճի հասկացությունը և տեսակները: Աշխատանքային վեճերի քննարկման կարգը: Դատական ակտերի կատարումը:
78. Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ պետական հսկողությունը և վերահսկողությունը: Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հասարակական վերահսկողությունը:
79. Պատասխանատվության ընդհանուր բնութագիրը. վարչական պատասխանատվությունը և քրեական պատասխանատվությունը:
80. Միջազգային աշխատանքային իրավունքի հասկացությունը: Միջազգային աշխատանքային իրավունքի աղբյուրները:

***Կառավարման ամբիոնի վարիչ՝***

***Վ. Խաչատրյան***